ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 62-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱ-ԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Մարտիրոս Մանուկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. 2025 թվականի մարտի 11-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Մարտիրոս Մանուկյանի (այսուհետ՝ Դիմող, ներկայացուցիչներ՝ փաստաբաններ Նարեկ Սամսոնյան և Միքայել Դանիելյան) դիմումը, որով Դիմողը խնդրել է.

«(…)

(…) Որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ և 75-րդ հոդվածներին»:

2. Ներկայացնելով թիվ ԵԴ/51131/02/21 քաղաքացիական գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը նշում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասը, հաշվի առնելով նաև իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը, հակասում է Սահմանադրության 61-րդ, 63-րդ և 75-րդ հոդվածներին:

Դիմողը գտնում է, որ գործին մասնակցող անձի կողմից բացասական (նեգատիվ) փաստ վկայակոչվելու դեպքում տվյալ անձը ոչ թե պետք է կրի այդ փաստի բացակայությունն ապացուցելու պարտականությունը, այլ հակառակ կողմը պետք է կրի դրա առկայությունն ապացուցելու պարտականությունը:

Դիմողը պնդում է, որ վիճարկվող դրույթը, հաշվի առնելով նաև իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը, նախատեսում է փաստի բացակայության ապացուցումն այն վկայակոչող կողմի վրա դնելու պարտականություն՝ բացառելով տվյալ փաստի առկայությունն ապացուցելու պարտականությունը հակառակ կողմի վրա դնելու հնարավորությունը: Այս առումով Դիմողը նշում է. «(...) գործին մասնակցող անձի կողմից փաստի բացակայությունը (...) վկայակոչելու դեպքում՝ [այդ] փաստի բացակայությունն ապացուցելու պարտականությունն այն վկայակոչող կողմի վրա դնելու պայմաններում չի կարող խոսք գնալ գործը՝ կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքների իրագործման պայմաններում ներկայացված լինելու մասին, քանի որ մի կողմը բացասական փաստը՝ որպես ժխտողական փաստ ապացուցելու օբյեկտիվ անհնարինության կամ առնվազն բարդ իրագործելիության պայմաններում, կրելով այդ փաստի ապացուցման պարտականություն, մյուս կողմի համեմատ հայտնվում է անհավասար և ակնհայտորեն ոչ բարենպաստ իրավիճակում, որպիսի հանգամանքն ակնհայտորեն վկայում է դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրացման համար անհրաժեշտ պայմանների բացակայության մասին (...)»: Նշվածով, ըստ Դիմողի, հիմնավորվում է այն, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասը հակասում է Սահմանադրության 61-րդ, 63-րդ և 75-րդ հոդվածներին, քանի որ անհնարին է դարձնում դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների իրացումը՝ անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր չսահմանելով գործնականում այդ իրավունքների իրացման համար:

3. Ելնելով դիմումի և թիվ ԵԴ/51131/02/21 քաղաքացիական գործով կայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝

Սահմանադրական օրենք) 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված* ***նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը,*** *ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որտեղ սահմանվում են այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով կարող է անհատական դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված ***նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը****, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում* ***առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:***

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ «*(…) Բոլոր այն դեպքերում, երբ*

դիմողը, ***ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (...) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:***

Այս առումով Սահմանադրական դատարանը հարկ է համարում փաստել, որ սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են **ոչ թե կոնկրետ գործի փաստական և (կամ) իրավական հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական նորմի տվյալ գործով կիրառման կամ չկիրառման, այլ նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի (դրույթների) սահմանադրականության գնահատման հարցեր**:

Քննարկվող համատեքստում հաշվի առնելով Դիմողի ներկայացրած դիրքորոշումները և հիմնավորումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերջինիս կողմից բարձրացվել է այնպիսի հարց, որը **ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն անհատական դիմումով **Դիմողը, ձևականորեն վիճարկելով** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) **սահմանադրականությունը, ըստ էության, բարձրացնում է տվյալ դրույթի կիրառման իրավաչափության հարց**:

Այսպես՝ Դիմողն իր անհատական դիմումով, ի թիվս այլնի, ներկայացրել է դիրքորոշում առ այն, որ *«(...)* ***ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով, հաշվի առնելով դրա վերաբերյալ դատական պրակտիկայում տրված մեկնաբանությունները,*** *թիվ* ***ԵԴ/51131/02/21*** *քաղաքացիական գործով Հայցվորի վրա դրվել է մի փաստ ապացուցելու պարտականություն, որի բացակայությունը վկայակոչում է հենց ինքը, այսինքն՝ այսպես կոչված բացասական (նեգատիվ) փաստը՝ որպես ժխտողական փաստ ապացուցելու պարտականությունը, որն ապացուցելու օբյեկտիվ անհնարինության կամ առնվազն բարդ իրագործելիության պայմաններում թիվ* ***ԵԴ/51131/02/21*** *քաղաքացիական գործով*

Հայցվորը ոչ միայն մյուս կողմի համեմատ հայտնվել է անհավասար և ակնհայտորեն ոչ բարենպաստ իրավիճակում, այլև գրեթե անելանելի վիճակում» (ընդգծումները՝ Դիմողի):

Վերոշարադրյալի հաշվառմամբ, նկատի ունենալով նաև Դիմողի կողմից դիմումում ներկայացված մյուս դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերջինս **իր անհամաձայնությունն է հայտնում թիվ ԵԴ/51131/02/21 քաղաքացիական գործով ՀՀ դատարանների կողմից կայացված դատական ակտերի բովանդակությանը:** Մասնավորապես, **Դիմողը վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) հակասահմանադրականության որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացնում,** իսկ որպես փաստարկ ներկայացվող դիրքորոշումներն առավելապես վերաբերում են **թիվ ԵԴ/51131/02/21 քաղաքացիական գործով ՀՀ դատարանների գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափությանը:**

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ սույն դիմումով Դիմողի կողմից բարձրացված հարցի ըստ էության քննությունը ենթադրում է Սահմանադրական դատարանի կողմից ոչ թե վիճարկվող դրույթի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) սահմանադրականության գնահատում, այլ **խնդրո առարկա քաղաքացիական գործի շրջանակներում ՀՀ դատարանների գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափության ստուգում, որը դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:**

Ուստի՝ սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից **ենթակա է մերժման՝** Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ **դիմումում առաջադրված հարցի՝ Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու հիմքով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«Մարտիրոս Մանուկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

2 ապրիլի 2025 թվականի
ՍԴԱՈ-52